

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Բուենոս Այրեսի հայոց հոգևոր տեսուչ Տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանի միջնորդությանը, բարեհաճել է իր բարձր ուշադրությանն արժանացնել Բուենոս Այրեսի հետևյալ քահանա հայրերի եկեղեցանվեր, անձնուրաց ծառայությունները և կատարել հետևյալ շնորհաբաշխությունները.

1. Ավագ քահանայության պատիվ և ծաղկյա փիլոն կրելու իրավունք է շնորհվել Տ. Արշամ քահանա Պոզոյանին:

2. Քահանայական լանջախաչ՝

Տ. Վազգեն քահանա Ստեփանյանին

և Տ. Մատթեոս քահանա Գոյումճյանին:

Դարձյալ Տ. Գրիգորիս վարդապետի միջնորդությամբ՝

3. Հայրապետական օրհնության կոնդակների են արժանացել՝

Տիկին Մարթա Դիարբեքիրյանը, իր բազմաթիվ բարեգործությունների, եկեղեցաշեն և կրթանվեր ծառայությունների համար թե՛ Ռումինիայում և թե՛ Արգենտինայում:

Բուենոս Այրեսի հայոց «Ս. Գրիգոր Լուսավորիչ» երգչախումբը՝ իր գործունեության 25-ամյակի և տեղի հայ եկեղեցիներում իր կատարած հոգեբուխ երաժշտական ծառայությունների համար:

Եգիպտոսի հայոց բարեխնամ առաջնորդ Տ. Զավեն արքեպիսկոպոս Չինչինյանի միջնորդությամբ իրենց եկեղեցանվեր, ազգային, կրթական, համայնքային գործունեության համար «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանի են արժանացել.

1. Տիար Էլիաս Ճերահյանը, Ադիս Աբեբա, գաղութային ժողովի ատենապետ.

2. Տիար Պերճ Կարապետյանը, նույն քաղաքի ազգային վարժարանի պահպանմանը իր նյութական և բարոյական ջանքերի համար.

3. Տիար Ավետիս Թերզյանը, եթովպահայ կյանքում իր կատարած 50-ամյա եկեղեցական և ազգային գործերի համար.

4. Տիար Էդվարդ Ճերեճյանը, Խարթումի համայնքի նախագահ, իր կատարած եկեղեցական-ազգային ղեկավարության համար: